

ԱԶԳԱՅԻՆ ՈՒՂԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ԲՐԱԾՈՅ ԽԵՂԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

ԱՌԱ՛Ջ, ԴԷՊԻ ԱՐՄԱՏՆԵՐ

Հայերենի ուղղագրութիւնը վերահաստատելու առաջարկը, որ այսօր դարձել է ազգային էութեանը հաւատարիմ մնալու հրամայական, ջրի երես հանեց ստի, կեղծիքի, զեղծարարութեան եւ երկերեսանութեան իրականութիւնը կերտողների մի մեծ խմբի:

Եւ ամենից գլխաւորը. բացայայտուեց, թէ արմատներին դառնալու կենսական անհրաժեշտութիւնը գիտակցող մտաւորականութեան միտքը որքան լուսաւոր է, նոյնքան էլ խաւարի մէջ են բոլոր նրանք, ովքեր չեն ուզում կամ չեն կարողանում ձերբագատուել օտարամուտ եւ ապագայնացնող գաղափարախօսութիւնից:

Այս վերջինները յանկարծ որոշեցին, թէ ազգային ուղղագրութիւնը վերահաստատելու հրամայականը քննարկելու կամ վիճաբանելու նիւթ է: Ճիշտ եւ ճիշտ մեր դրացի թուրքերի օրինակով, որոնք 1915-ի Ադէտը ճանաչելու համար շարունակ առաջարկում են գիտական յանձնաժողովների ոլորտի մէջ կատարուող քննարկումներ եւ այդ քննարկողներն էլ պէտք է անպայման լինեն պատմաբանները: Այսինքն, ժամանակին իրականացուած ոճրագործութիւնը արդէն պատմութիւն է, անցած-գնացած մի դիպում: Չի կարելի, անհնար է պատմութեան անիւր շրջել եւ վերադառնալ Անցեալին:

Այսպիսով մէկ անգամ եւս հաստատուեց որ Կրեմլի դրածոները բոլոր ճակատներով աշխատում են ջնջել Հայի յիշողութիւնը, եւ նոր սերնդին էլ պահելով մտաւոր ու իմացական խաւարի մէջ, վերջնականապէս կտրել Արմատից՝ իրականացնելով ռուս-թուրքական վաղեմի երազանքը, որ առանց Հայի Հայաստան ունենալն է...

Ահաւասիկ, թուրքավարի ասպարէզ իջան «պետական հայրենասէրներն» ու «պաշտօնական մտաւորականները» իբրեւ «գիտական փաստարկներով», որոնք, սակայն, որեւէ կապ չունեն գիտութեան, առաւել եւս առողջ բանականութեան եւ բացայայտ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ հետ: Քանի որ, երբ նրանք փորձեցին վիճաբանութեան մէջ քաշել մեզ, ապա արդիւնքը եղաւ նաեւ այն ճշմարտութեան բացայայտումը, թէ գործ ունենք անտառը հատելու ելած կացինների հետ, որոնց փայտէ կոթ է տուել նոյն այդ անտառը:

Սկզբնական ամենից «ծանրակշիռ փաստարկներն» էին որ, եթէ վերահաստատուի հայերենի ուղղագրութիւնը, ապա ժողովուրդը կը դառնայ անգրագէտ, որովհետեւ հայերենի ուղղագրութիւնը դժուար է, յետոյ հնարաւոր չէ հայերենի ուղղագրութեամբ վերահրատարակել 1922-ից ի վեր լոյս տեսած գրականութիւնը եւ, վերջապէս, ծախսերի հարց կայ եւ աղքատ ու թշուառ մի երկիր չի կարող դրա տակից դուրս գալ:

Այսպիսով, շարունակուում է կոմունիստական քարոզչութեան այն կեղծիքը, թէ հայերենի ուղղագրութիւնը բռնութեամբ ռուսացնելը գրագիտութիւն տարածելու «բարի նպատակ» էր հետապնդում: Իրականի մէջ սովետական այդ «գրագիտութիւն»ը խեղաթիւրեց մարդու ազատ միտքն ու հայոց լեզուն: **Սովետական մարդու** «գրագիտութիւն» դարձաւ սոսկ տառաճանաչութիւնը, ուստի նա Ընթերցող չդառնալով, այնպէս էլ հասու չեղաւ հոգեւոր մշակութային արժէքների լիակատար համակարգին: Քանի որ սովետական գրականութիւնը գերազանցապէս ներշնչում է ապագայնութեան գաղափար եւ նոյնիսկ բանաստեղծութիւնը զրկուած էր գեղեցիկին հաղորդակցելու հնարաւորութիւնից՝ դառնալով յանգաւորուած կարգախօսների մի շարան: Ուղղագրութիւնը խաթարելու նպատակը բացայայտ էր: Նոր սերունդը հաղորդակցուելու հնարաւորութիւն պէտք չէ ունենար «նախա-յեղափոխական» գրականութեան հետ, որի հարուստ ժառանգութիւնը, չնչին բացառութիւններով, պարզապէս

արգելուեց: Յիշեցնեմ, որ գրականութեան վրայ դրուած արգելքը զանց առնողներին դատապարտում էին բանտով ու արքայով: Եւ ինչպէս արդէն այս վերջին երկու տասնամեակներին յաչս համոզուեցինք, որ ոչ միայն համալսարանական թերուս բանասէր-լեզուագէտներն են շարունակ մատների վրայ խաղացնում Հայերէնը, այլեւ մեջտեղ են եկել կատարեալ անգէտ «լեզուագէտներ», ովքեր չտիրապետելով ոչ հայերէն եւ ոչ էլ որեւէ ՕՏԱԸ ԼԵԶՈՒ, նաեւ ՄԵՌԱԾ ԼԵԶՈՒՆԵՐ, մասնագիտացել են ԶԵՂԾՈՒԱԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ յօրինելու մէջ: Հայերէնի գեղծուած այբուբենով եւ սովոկային խեղագրութեամբ նրանք հաւակնում են քննարկել Հնդ-եւրոպական լեզուախումբը, խորտակել գիտական բոլոր հիմքերը եւ բանն այնտեղ հասաւ, որ սկսեցին քարոզել մի կատարել իդիոտիզմ, թէ «աշխարհի լեզուներ ստեղծուելու հիմքը եղել է հայերէնի այբուբենը» (ի հարկէ, նկատի ունենալով Լենինի Դեկրետով աղաւաղուած, սառկային բնորոշումով՝ «արդիականացուած այբուբենը»):

Խաթարուած ուղղագրութեամբ հրատարակուած սովետական գրականութեան առատութեան մէջ վերահրատարակելու արժանի գործերը չնչին, աղքատիկ քանակութիւն են, եւ յետոյ այդ գործերը նոյնիսկ սովետական պարզունականացուած խեղագրութեամբ դիւրութեամբ կարող է ընթերցել մեսրոպեան ազգային ուղղագրութեան գրագիտութեամբ բարեկրթուած հայր:

«Օ՛հ, ինչպէ՛ս կարելի է... Այս ի՛նչ յոռետեսութիւն է... Մի՞թէ մեր բացառիկ մշակոյթը... Մի՞թէ մեր ընտիր ու հանճարեղ ժողովուրդը...» եւ այլն,— լսում եմ սովետական հայրենասիրութեամբ տոգորուածների քրթմնջոցը: Բայց հարցն էլ հէնց այն է, որ մեր ընտիր ժողովրդի հանճարը, այսինքն ոգեղենութիւնը լլկեցին եօթանասուն տարիների ընթացքին եւ հոգեզրկելով՝ մեր մէջ սպանեցին ազգային արժանապատուութիւնը, ինչը եւ փոխարինուեց գետնաքարշ մեծամտութեամբ, այնուհետեւ քրիստոնէական հաւատի լոյսից նետեցին անաստուածութեան խաւարի մէջ, եւ հիմա էլ փորձում են վերջնականապէս հատել մեր ինքութեան հզօր ծառաբունը ու մէկ ընդ միշտ կտրել արմատներից:

Նրանք, ապագայութեան այդ գործակալները չեն թաքցնում իրենց նպատակը: Ակադեմիկոս Ս. Աբրահամեանը յայտարարում է. «"Վերադարձ դէպի արմատները" կեղծ, անտրամաբանական, հակապատմական կարգախօս է» («Գարուն», Օգոստոս, 1997): Բայց ինչո՞ւ... Ինչո՞ւ է արմատներին վերադառնալը հակապատմական... Այս հարցի պատասխանը գտնում ենք Ի. Ստալինի «բոլոր ժամանակների խոշորագոյն լեզուաբանի» «Մարքսիզմն ու լեզուաբանութեան հարցերը» «դարակազմիկ» յորջորջուած աշխատութեան մէջ. «...որպէսզի աւելի մեծ հնարաւորութիւն ստեղծուի ազգային մշակոյթները մէկ ընդհանուր մշակոյթի եւ մէկ ընդհանուր լեզուի մէջ ձուլելու համար»:

Յիրաւի, Ի. Ստալինը անմահ է, քանի որ նրա սկսած գործը հաւատարմօրէն շարունակեցին ջահուկեանները, աբրահամեանները եւ նրանց հետքերով այսօր շարունակում են բոլորը, ովքեր գիտութիւն անելու փոխարէն, զբաղուած են հացկատակութեամբ:

«Գիտական» համարուելու ակնկալութիւն ունի «ազգային ուղղագրութիւնը դժուար է» առարկութիւնը:

Այս եւ նման «փաստարկներ»ը մարդկանց աչքը վախեցնելու նպատակ է հետապնդում: Չմոռանալով, որ սովետական մարդուն աւելի շատ ներշնչում էին, քան սովորեցնում, ուստի դժուարութիւններից խօսելով սրտաճմլիկ հոգատարութիւն էլ են փորձում դրսեւորել, թէ «ամէն ինչից զրկուած մարդկանցից հիմա էլ խլէ՛նք նաեւ վերջինը գրագէտ մարդ լինելու հպարտութիւնը» (Ֆ. Խլդաթեան): Այս «լեզուաբան»ը իր ցաւքաշութեամբ շարունակում է սովետական լուսծողկոմ Պ. Մակինցեանի նենգաբարոյ երկերեսանութիւնը, երբ ազգային ուղղագրութիւնը ապագայինի փոխելուց յետոյ նաեւ ազգային այբուբենը լատինականով փոխարինելու ծրագիրը ներկայացնում էր որպէս «մարդասիրութեան» արտայայտութիւն. «արխիւր նետենք Սահակ-Մեսրոպեան անկիւնաւոր, տգեղ եւ աչքերի համար վնասակար այբուբենը»: Մարդկանց աչքերի առողջութեան մասին մտահոգուելիս, բոլշեփկեան այս գործիչը ծպտուն իսկ չէր հանում, երբ արդէն սկսել էին մարդկանց աչքի հետ ընդհանրապէս հատել տասնեակ ու հարիւր հազարաւոր անմեղ մարդկանց գլուխներ:

Ընդհանրապես մոլորություն է, թե չարաբաստիկ եօթնանասուն տարիների ընթացքին պետական քաղաքականությունը երբեւէ նպաստել է **ազգային** մշակոյթի զարգացմանը: Երբեք: Քանի որ «ազգային մշակոյթի կարգախօսը բուրժուական խաբեբայություն է: Մեր կարգախօսն է համաշխարհային բանուորական շարժման մշակոյթը»,— գրել է Վ. Լենինը (Երկերի ժողովածու, հ. 19, էջ 42):

Սովետական մարդու գործը «հեշտացնելու», այսինքն, նրան ոչ միայն ազգային, այլեւ համաշխարհային հոգեւոր մշակոյթից կտրել-հեռացնելով վերաջնականապէս հոգեզրկելու եւ փոխարէնը գաղափարական նուիրութիւն ներարկելու նպատակը նոյնպէս գալիս է անցեալ դարի 20-30-ականներից: Այն ժամանակներից, երբ Մաքսիմ Գորկին գովերգում էր, թէ ԳՈՒԼագի մէջ «չեկիստների աշխատանքն է, որ իսկական **հումանիզմ** է, սէր մարդու նկատմամբ» (Եժ, հ. 27, էջ 509): Վ. Լենինի վերոյիշեալ կարգախօսի առաջնորդութեամբ եւ հումանիզմի ու սիրոյ այսօրինակ ըմբռնումով էր, որ Մ. Գորկին նուիրուեց համաշխարհային գրականութիւնը վերապատմելու ծրագիրն իրականացնելու գործին: Վերապատմելիս գրական այդ արժէքները պարզեցում էին, զրկում էին յուզական լարուածութիւնից, պարփակում էին տեղակատուութեան շրջանակի մէջ: Ինչո՞ւ... Ի հարկէ, «կիսագրագէտ մարդկանց գործը հեշտացնելու եւ այն պատրանքն ստեղծելու համար, թէ իրենք հաղորդակցուած են համամարդկային գրականութեանն ու մշակոյթին» (Ն. Բերբերովա, Երկաթական Կինը):

Վերջապէս, հեռաւոր կամ մօտաւոր անցեալին միեւնոյն է, մեզ համար դիւրին է եղել **«խառնաբարոյութիւնը, բարքերի ապականութիւնը, սիրոյ սպառումը կրօնի ու ընկերութեան նկատմամբ»** (Խ. Աբովեան), դիւրին է եղել անաստուածութիւնն ու խաւարամտութիւնը: Հենց այդ դիւրին միջոցներով ջրի երես ելածներն են, որ այսօր փորձում են տնօրինել Հայի ճակատագիրը:

ՄԷԿ ՀԱՅԵՐԷՆ,
ՀԱՅԵՐԷՆԻ ՄԷԿ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՄԷԿ ՀԱՅԵՐԷՆԻ ԵՐԵՔ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

Հայոց լեզուի համար այս է իրականությունը: Մակայն, ինչպես Հայաստանի, նոյնպես եւ սփիւռքի մէջ, Հայերէնի ուղղագրութեան պահանջը փոշիացնելու նպատակով, խնդիրը մանրացնում եւ ամէն առիթով փորձում են գոնէ հպանցիկ ներշնչել, թէ հիմա երկու հայերէն գոյութիւն ունի, քանի որ «ստեղծուած է երկու ժողովուրդ»: Թէ որպիսի՝ քաղաքական նպատակներ է հետապնդում այս «յայտնագործութիւնը», բոլորովին կապ չունի նախադէկլեատային ուղղագրութիւնը վերահաստատելու պահանջի հետ, հետեւաբար առայժմ զանց առնենք այդ:

Եթէ առօրեայ խօսք ու գրոյցի մէջ պայմանականօրէն ընդունելի է ասել «արեւելահայ եւ արեւմտահայ լեզուներ» (մի քանի տասնամեակ առաջ շատ աւելի հասկանալի էին հնուց եկող «ռուսահայ» եւ «թրաքիայ» եզրաբառերը), ապա առնուազն անպարկեշտութիւն է, երբ իրենց «գիտականութեամբ» մեզ առարկողները միշտ խուսափում են օգտագործել ճշգրիտ ձեւակերպումը՝ **արեւելահայ գրական լեզու** եւ **արեւմտահայ գրական լեզու**: Այլապէս կարելի է կարծել, թէ արեւելեան կամ ռուսական Հայաստանի մէջ հայը մինչեւ օրս էլ չի խօսում իր Լոռուայ, Գիւմրուայ, վերջապէս, Ղարաբաղի բարբառով, ինչպէս եւ արեւմտեան կամ թուրքաց Հայաստանի մէջ հայը չի խօսել Վանա, Երզնկայի կամ Մշոյ բարբառներով, որոնք դեռ պահպանուած են տարաշխարհիկ հայերի խաւերի մէջ:

Հայերէնի մէջ առաջին գրական լեզուն **գրաբարն** է, ԳՐԻ ԼԵԶՈՒՆ, որ ստեղծուել ու մշակուել է Աստուածաշունչը թարգմանելու անհրաժեշտութեամբ եւ Հայերէնը իւրացնելու համար, գրագէտ Հայ լինելու համար գրաբարի իմացութիւնը անհրաժեշտութիւնն է:

Ուղղագրութեան վերահաստատման պահանջ ներկայացնելով վիճաբանելու որեւէ խնդիր չենք ունեցել, քանի որ վէճը ծնւում է այլընտրանքների պարագային: Իսկ Հայերէնի ուղղագրութիւնը այլընտրանք չունի: Պատճառն այն է, որ «Հայոց գրերի յօրինումով, գերազանց ուղղագրական համակարգի ստեղծումով, իր այբուբենի եւ ուղղագրութեան գործնական կիրառութեամբ Մեսրոպ Մաշտոցը դրսեւորել է իրեն որպէս մեծ գիտնական», եւ կարողացել է «ստեղծել այբուբենն ու մի այնպիսի ուղղագրութիւն, որի նկատմամբ **ոչ մի դիտողութիւն չի կարելի անել**»: Այս մէջբերումները կատարում եմ ակադեմիկոս Էդուարդ Աղայեանի Մեսրոպ Մաշտոց աշխատութիւնից (Երեւան, 1986, էջ 108.— Ընդգծումն իմն է. Կ.Ա.Ս.):

Ինչ վերաբերում է հայերէնի ուղղագրութեամբ կարդալ կարողանալու մտահոգութեան, որպիսին յայտնել է ոմն ընդդիմախօս, ապա գրերը ճիշտ իրենց հնչիւններով արտաբերելը պէտք է սկսել, հաւանաբար, ոչ թէ **Հ** եւ **Յ**-ից, այլ **Թ** եւ **Յ**-ից կամ **Տ**-ից եւ **Ծ**-ից, որպէսզի չասենք շնորհակալու**Ց**ուն, չասենք Վա**Ծ**իկան, չասենք **հարուր**՝ շնորհակալու**Թ**ին, Վա**Տ**իկան եւ **հարԻ**ւր ասելու փոխարէն:

Ուղղագրութիւնը վերահաստատելու պահանջը միայն լեզուական խնդիր չէ, այլ ունի քաղաքական խորք: Սովետական «ուղղագրութիւն»ը հայերէնը ընդհանուր լեզուի մէջ ձուլելու առաջին քայլն է, հետեւաբար կոմունիստական բռնատիրութեան մէջ իրականացուած մշակութային ցեղասպանութիւնը հաստատող ապացոյց:

Ապագգայնացուած լեզուաբանները եւ նոյնիսկ գրականագէտները «գիտական խաղեր տալով» ոչ միայն փորձում են ներշնչել երկու հայերէնների գոյութիւնը, այլեւ «յայտնագործեցին» **աշխարհաբարի ուղղագրութիւնը**, որպիսին իրականի մէջ գոյութիւն չունի: Այս ճամարտակութիւններով նրանք նպատակ ունեն բանից անտեղեակ մարդկանց համոզել, թէ ուղղագրութիւն վերահաստատելու հրամայականը ակնկալում է սահմանադրական փոփոխութիւն:

Ուլքէ՞ր են բանից անտեղեակ այդ մարդիկ, որոնց առաւել եւս մոլորեցնել են ուզում երդուեալ ապագգայինները:

Այդ անտեղեակ մարդիկ նոյնպիսի ապագգայիններ են, որոնց մայրենի լեզուն ռուսերէնն է, որոնց մտածողութիւնը ռուսական է, որոնց «հայրենասիրութիւնը» ռուսական չափողականութիւն ունի:

Կամ պարզապէս թերուսներն են:

Խօսքը վերաբերում է Հայաստանի վարչակազմին եւ պետական մտաւորականներին նախագահից մինչեւ նախարարներ, Ազգային ժողովի երեսփոխաններից մինչեւ դեսպաններ, կարմիր ակադեմիկոսներից մինչեւ կարմիր գրողներ ու գործի գլուխ անցած «լաւ տղերքը»:

«Հայերէնագիտութիւնը իմ իմացած մարզերից չէ», — խոստովանել է մի երկրի նախագահ, որտեղ հայերէնը Սահմանադրութեամբ հաստատուած վարչական լեզու է: Ընդ որում այս նոյն մարդատեսակը խոստովանեց, թէ ինքը ոչ թէ քրիստոնեայ է, այլ ԱԼԲԱՆԱՅԻ եւ այս հանգամանքը արգելք չէղաւ որ երդուելիս ձեռքը դնի Սուրբ Գրքի վրայ:

Իսկ Գ. Զահուկեանը գեղեցկախօսում էր, թէ «պետական լեզուն պէտք է պարտադիր գործածութիւն ունենայ», բայց իր գործունէութեան ամբողջ ընթացքին ոչ մասնաւոր եւ ոչ էլ պաշտօնական առիթով բնաւ չի ընդվզել, որ իշխանութիւնների պարտադիր լեզուն ռուսերէնն է:

Ինչպէս երէկ, նոյնպէս եւ այսօր:

Նախագահի մերձաւոր եւ ՀՅԴ առաջնորդներից Վ. Յովհաննիսեանը ազգայնագանց այս իրողութիւնը «արդարացնում է», բացատրելով, թէ «Ռուսերէնը մտել է մեր կենցաղը»: Որ ռուսերէնը վաղուց էր մտել կոմունիստական իշխանութիւնների կենցաղը մեզնից ոչ ոքի համար նորութիւն չէ, բայց մի թէ բանն այնտեղ է հասել որ ռուսերէնը մտել է նաեւ դաշնակցութեան վերին ղեկավարութեան կենցաղ: Զէ՞ որ ՀՅԴ մամուլն ու նրա բանիմաց խմբագիրներն են տասնեակ տարիներ եղել հայերէնի նուիրեալ պաշտպաններ... Որուսացած «ազգային» գործիչին արձագանքում է Ռուսաստանի դեսպանը. «Իսկական հայրենասէր հայը պէտք է ռուսամետ լինի»: Նախագահն ու նրա գլխաւոր խորհրդականը, անշուշտ, շատ շոյունեցին հայրենասիրութեան նորայայտ այս բնորոշումից: Բայց մենք յիշելու ենք ոչ թէ «շուռ տուած հայերին», այլ ճշմարիտ ազգային գործիչ Ստեփան Ոսկանին, որ դեռեւս աւելի քան մէկուկէս դար առաջ զգուշացրել էր. «Հայերը ոչ միայն հաւատացին Ռուսիայի խոստումներուն, այլեւ կողմնորոշուեցան դէպ ի Ռուսիան, այլեւ արիւն թափեցին անոր համար, այլեւ հայրենիքնին թողին եւ միահամուռ, չքսենք կոյր զկուրայն, անոր գիրկն ինկան: Պատմութիւնը օր մը պիտի ըսէ, թէ ինչ գտան հոն եւ թէ ինչ բարիք տեսան ռուս հովանիէն. պատմութիւնը իր անաչառ ատենինն առջեւը պիտի կանչէ այն կարծեցեալ ազգասէրները, որք Հայկեան ոգւոյ վրայ այս նոր վերքն ալ աւելցուցին»:

Ռուսական դեսպանի «հայասիրական» կարգախօսը տեղն ու տեղը զարգացրեց ակադեմիական մի սինլքոր, թէ «Ռուսերէն չիմանալով դժուար է հայ մնալ»:

Արդարագանց նախագահի եւ նրա նոր գլխաւոր խորհրդական Վ. Յովհաննիսեանի առաջին քայլը 1998-ին եղաւ «ռուսական դպրոցների փակման եւ ռուսերէնի ճնշման պատճառ դարձող Լեզուի Տեսչութեան պետ Վ. Միրզոյեանին վանել այդ պաշտօնից, քանի որ «ներկայումս անհրաժեշտ է իրականացնել առաւել հաւասարակշռուած քաղաքականութիւն» (Վ. Յովհաննիսեան): Ապագգային կարճամտութեան որպիսի ինքնամերկացում... Այս միտքը շատ աւելի «համ ու հոտով» զարգացրել է Ս. Կապուտիկեանը իր «սոցիալիստական հայրենասիրութեամբ» Վ. Միրզոյեանի երեսին նետելով, թէ «Դուք քեալլագեղոգներ էք: Ո՞ւմ է պէտք ձեր հին ուղղագրութիւնը»:

Յանուն ռուսաց լեզուի հայերենի դեմ այսպիսի արշաւանքի հետեւանքը եղաւ վարչապետ Վ. Սարգսեանի կայացրած կառավարական որոշման համաձայն 2000 թ. Սեպտեմբերից 60 (վաթսու ն) ռուսական դպրոց բանալու փաստը (§ՃոճճէօՅ Ինճէն՝, Փարիզ, 25 Յունիս, 2000):

Եզրակացութիւնը պարզ է: Հայաստանի օրուայ իշխանութիւնները եւ ազգութաց իշխանութիւններին իրենց հնազանդութիւնը բոլոր առիթներով հաւաստիացնող մտաւորականները միշտ դիմադրելու են ամէն քայլի, որ կը կատարուի ի նպաստ մայրենի լեզուի: Եւ Լեզուի պետական հիմնարկութեան ծառայողներն էլ այս ապագային մթնոլորտի մէջ շարունակելու են իրենց սադրանքները, քանի որ ո՞վ է դատաւորը: Հայաստանի կոմկուսի կենտկոմի պատասխանատու աշխատողի աթոռից Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրական Դատարանի նախագահի բազկափոռին յայտնուած Գազիկ Յարութիւնեան՝... Կամ գուցէ հայոց լեզուից փարսախներով հեռու Մերգո Երիցեան՝ ով իր մշտական հանգրուանը գտած նուիրուել է «լաւ ապրելու» տարիների երազանքին...

Թէ՞ դատաւոր ենք ուզում տեսնել նրանց, ովքեր դարձել են Երկրի նիւթական արժէքների տիրակալ եւ յանդգնում են իրենց տիրապետութիւնը տարածել մարդկանց հոգիների, հոգեւոր մշակոյթի եւ հայի ոգեղենութեան վրայ:

Սովետական խեղագրութիւնը պաշտպանելու առիթով մէջտեղ եկած «գիտուններից» մէկը անամօթաբար նենգում է հայերենի ուղղագրութիւնը վերահաստատելու հրամայականը ներկայացնելով, թէ առնուազն արեւելահայ գրական լեզուն արեւմտահայ գրական լեզուով փոխարինելու հարց է բարձրացուած. «Յոյց տուէք մի ոլորտ, որին արեւելահայերէնը խանգարում է, ո՞րն է այն գիտական հիմքը, որին հետեւելով փոխում ենք պետական լեզուն» (Բեդիրեան «նախկին արեւմտահայ», «Ավանգարդ», թիւ 46, 2001): Սովետական այս բրածոն չգիտէ՞, որ խօսքը մեր երկու գրական լեզուները մէկը միւսով փոխարինելուն չի վերաբերում, քանի որ դրանցից իւրաքանչիւրը միւսին համագոր արժէք է: Անշուշտ, չգիտէ, որ երկու գրական լեզուներն էլ **ՀԱՅԵՐԷՆ** են: Չգիտէ նաեւ, որ երկու գրական լեզուները միեւնոյն բառամթերքի ԼԻԱՐԺԷՔ ՏԵՐԵՐՆ են: Եւ եթէ ոմանց կարծիքով արեւմտահայերէն ու արեւելահայերէն բառեր գոյութիւն ունեն, ապա այդ մոլորութիւնը սովետական բառարանագիրների քաղաքական ծրագրաւորութեան հետեւանքն է:

«Ատեն» եւ «Ժամանակ» բառերը հայերէն են եւ ունեն իրենց նրբերանգները: Խօսակցական լեզուի մէջ այդ նրբերանգները չընկալելը, առաւել եւս ռուսահայի արեւմտահայ գրական լեզուն չհասկանալը կամ երբեմնի թրքահայի արեւելահայ գրական լեզուից խրտնելը դեռեւս չի նշանակում, թէ գրական մեր երկու լեզուները իրար նկատմամբ խորթ են, օտար եւ նոյնիսկ հայութեանն են բաժանում երկու տարբեր **գոների** (սա էլ իրեն մտաւորական կարծող մէկ ուրիշ գործիչի ազգադաւ քարոզչութիւնն է): Այս ամէնը նշանակում է, որ գործ ունենք ընդամենը թերուս մարդկանց հետ, որոնք թէեւ հայերէն խօսել կարողանում են նախակրթարանից քիչ վեր մակարդակով, սակայն բնաւ չեն տիրապետում հայոց լեզուին:

Բայց որտեղի՞ց յօրինեցին, թէ ուղղագրութիւնը վերահաստատելը առնուազն «պետական լեզու» փոխել է նշանակում:

Մարքս-լենինեան ուսմունքով զինուած ջահուկեանական այս փաղանգը մի քանի տարի առաջ «միացեալ գիտաժողովի» Եզրակացութեան մէջ, որ ունէր «Վերջ տալ հայերենի արդի ուղղագրութեան դեմ կատարուող ոտնձգութիւններին» ճոճոտան մի վերնագիր, յատկապէս ընդգծել էր, թէ «Պետք է վերանայել “Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան” այն կէտը, որ վերաբերում է Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուին: Անհրաժեշտ է յստակ ու միանշանակ սահմանել, որ Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն **գրական արեւելահայերէնն է արդի ուղղագրութեամբ**» (ընդգծումն իմն է-Կ.ՄԱ):

Այսինքն վերաշարագրել «Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն Հայերէնն է» ճշգրիտ ձեւակերպը:

Իսկ «հայերենը հայ ժողովրդի ազգային, Հայկական ՍՍՀ պետական լեզուն է: Խօսողների թիվը մօտ 5 միլիոն, որից 2 միլիոն 710 հազարը ՀՍՍՀում» (ՀՍՀ, հ. 6, 1980, էջ 159):

Ջահուկեանը ոչ միայն բացայայտ գեղծարարութեան էր դիմում, փորձելով մասնատել Հայերենը կամ պարզապէս խաբել ընթերցողին, թէ **արեւմտահայ գրական լեզուն** Հայերէն չէ, այլեւ ակադեմիական իր «գիտելիքների» բարձունքները լքած, առանց այլ եւ այլի ճամարտակում էր **արեւմտահայերէնի ուղղագրութիւն, գրաբարի ուղղագրութիւն** եզրեր շինելով, որոնք պարապ ու անիմաստ են նոյնքան, որքան մէկ ուրիշի, հակառակի պէս դարձեալ ակադեմիկոսի այն պնդումը, թէ աշխարհագրի ուղղագրութիւնը չի կարող հինը կամ դասականը լինել (Լ. Հախվերդեան, «Ազգ», 5 Յուլիս, 2000): Նկատի ունենալով, որ Հախվերդեանը նկատուել է նաեւ որպէս թումանեանագետ, պէտք է արձանագրենք, որ նա երբեւէ չի թերթել Յովհ. Թումանեանի ձեռագրերը: Այլապէս նկատած պէտք է լինէր, որ բանաստեղծը իր ոչ միայն անունն է ստորագրել է հայերէնի ուղղագրութեամբ այլեւ, օրինակ, «Անուշ» պոէմն ու «Լուսաւորիչի կանթեղ» բանաստեղծութիւնն է գրել հայերէնի ուղղագրութեամբ: Վերջապէս, պէտք է նաեւ իմանար, որ սովետական խեղագրութեան դէմ առաջին իսկ ընդվզողներից մէկն էլ եղել է նոյն Թումանեանը:

Հայերէնի (եւ ոչ թէ արեւմտահայերէնի) ուղղագրութեամբ են գրել Դուրեանը, Ոսկանը, Վարուժանն ու Շահնուրը եւ Աբովեանը, Նալբանդեանը, Տէրեանն ու Կոստան Ջաբեանը... Հայերէնի (եւ ոչ թէ արեւմտահայերէնի) ուղղագրութեամբ է գրում պարսկահայութիւնը...

«Մի թէ կոչումներով ու շքանշաններով պաճուճուած մարդիկ այսքան հասարակ բաներ չեն հասկանում»,— իրաւացիօրէն կարող են հարցում անել հայերէն խօսելը «ձեռի հետ» սովորած մեր հայրենակիցները:

Շատ հնարատր է որ իսկապէս չեն հասկանում: Չգիտեն: Թերուս են: Ինչն ընդհանրապէս բնորոշ է սովետական իրականութեան համար:

Այսօրինակ եզրակացութիւնը թէեւ ցաւալի, բայց անհերքելի մեր իրականութիւնն է...

Դեկտեմբեր, 2001

Փարիզ